

րեք՝ չորս օր եւ մինչեւ շաբաթ մը ծով պահողներ ըստ Եպիփանի, մինչ սովորաբար երեկոյէ երեկոյ կը լուծէին Յոյները. եւ արեւմտեայք ի սկզբան նոյնպէս, ու ստորին դարերուն կը ճաշէին Թ կամ Զ ժամուն (անդ, 2146-8):

Մեր մէջ սակայն այդչափ զանազանութիւն չկար: Մեր նախնեաց ծովը միօրեայ էր, եւ լուծումն երեկոյին: Առ այս՝ իբր հնագոյն վկայութիւն ունինք Աշտարակեցւոյն մէկ կանոնը, թէ քառասնորդաց եւ առաջաւորաց մէջ «մի՛ որ իշխեսցէ լուծանել ըստ սրբոց կանոնաց ցերեկոյ» (1): Խոսքովիկ յառաջ բերելով սոյն կանոնը, կը զօրացնէ զայն: Ասորիկ ասոր գործնական օրինակն ալ կուտայ, Խլածորոյ վանականաց համար պատմելով՝ թէ աղուհացից մէջ «մի անգամ միայն յաւուր» կը ճաշէին (175): Եւ զոր երեք դար վերջ կը կրկնէ ՅՏ. Եզնկացին եւս, խրատելով օրը «մի անգամ ուտել» (Խրատ. ԺԷ): Այս մի անգամը տակաւին երեկոյին էր միշտ, ինչպէս ճառից Լուծողը կ'աւանդէ, «անսուղութեամբ մնալ մինչեւ յերեկունն, եւ ապա ճաշակել հաց եւ աղ եւ ջուր» (Լծ. ՊՏ. Ա), եւ որոյ հետ նոյն է Ստոյ 1342ի ժողովոյն յիշած «իններորդ» ժամն ալ (Տուռ. 387), զոր կը